

Ուլնեցին, նոյն ինքն Սիմէոնի խօսքով թէ եւ Ձեր, բայց «անձնեայ, մեծաշուք եւ առատաձեռն» էր (Ջամբէ էջ 28)։ Էջմիածնի շինութեան եւ բարեկարգութեան լաւ աշխատեցաւ, եւ օգտակար հրովարտականքներ (= «գրեանս օգտակարս») ձեռք բերաւ։ Օսմ. կառավարութեան առջեւ մեծ համարում կը վայելէր Ուլնեցին։ «յաջողի էր ի քան եւ իրիւր ի նոյն» (Ջամբէ էջ 28)։ այս խոստովանութիւնները, նոյն ինքն Սիմէոնի գրչին տակ, կը հակասեն պարզապէս եւ անդէմէն բացատրութիւններուն։

Կոլոտի պէս Պատրիարք մը, որ բառին բովանդակ նշանակութեամբ նուիրուած էր իր կոչումին եւ պաշտօնին եւ Հայ. Եկեղեցւոյ բարեկարգ եւ պայծառ վիճակին արդեամբ կը ծառայէր, ինչ լաւ դէպքերու չէ՞նք պիտի ունենար Էջմիածնի Աթոռոյ հանգէպ, որուն արժանաւոր Վաթողիկոս մը բնորեւ տուաւ, առանց թեկնածելու։ Եւ նորընտիր Վաթողիկոսին արքունի հրովարտակն ալ հանելու համար՝ Կոլոտ յանուն ազգին մատուցած է Արշայն (= Թագրիբ), քանի որ արդէն սովորութիւնը այս էր. «ի նոր հրաւիրին Վաթողիկոսացուն ի Վաթողիկոսութիւն, արշայն ի բերանոյ ժողովրդոյն գրիւր»։ Անտարակոյս Ս. Կարապետի Առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսի բնորութեան մէջ ալ մեծ դեր ունեցան Կոլոտ եւ Շղթայակիր։ Կոլոտ

---

յոչ ասելն իմ, ապա այն եկող Վարդապետքն բերին եւ հազար մի այլ գրեալ՝ թէ նա յանձն չառնու եւ չինի զՋահկեցի Ղազար Վարդապետն կը խնդրեմք եւ ոչ զայլ ոք։

Եւ յետ բազմաց ասից եւ խօսից, կնքեցի մեղաւորս նախ զհաւանութեան գիրն, որ եւ ի վերայ նորա հաստատեցաւ Վաթողիկոսութիւնն։

Եւ իմ ելեալ անտի փութով գնացի յԱռակուտար, զի մի զրոյցն բազմացի, եւ զհազարն յիշմիր յղեցաք առ Ղազար Վարդապետն, զի ելեալ գնացե ի Սուրբ Գահն։

(Սէօն 1866 էջ 142.)